


ՅՈԳՆԱ՛Ճ ԵՆՔ ԱՅՍՔԱ՛Ն ՅՈԳՆԵԼԷՆ

Posted on August 26, 2016 by Keghart



Category: [Opinions](#)



Մեր Պարզ Դաւիթեան, Լուսաբաց, 13 Օգոստոս 2016

Պետական իշխանութիւնները աշխարհի ամեն կողմ սովորութիւն դարձուցած են ահաբեկիչ (terrorist) կոչել բոլոր անոնց, որոնք անյուսաւի և անհաւասար պայքար կը մղեն՝ զէնք բարձրացնելով իշխանատերի ահին ու սարսափին դէմ: Հայաստանի իշխանութիւններն ալ հետեւեցան այդ սովորութեան, երբ ահաբեկիչ կոչեցին "Սասնայ Ծռեր" խմբակի գինեալները, որոնք Խորենացի փողոցի ոստիկանատունը գրաւելով՝ ժողովրդային ապստամբութեան սերմեր փորձեցին ցանել Հայաստանի մէջ:



Թէեւ ապստամբութիւն չառաջացուց այդ խմբակին ինդրայարոյց արարքը, սակայն բաւական եղաւ որ Հայաստանի մէջ ԱՐՄԱՏԱԿԱՆ փոփոխութեան պետքը զգացներ Սերժ Սարգսեանին (ըստ իր ըրած յայտարարութեան) և Սփիւռքի մէջ ալ Սերժ Սարգսեանին հետ մեղրալուսնի մէջ գտնուող մարդիկը կամ կուսակցութիւնները, միութիւններն ու կազմակերպութիւնները շփոթութեան մատներ և ճիշդ դիրքորոշուելու կամ կողմ ճշդելու անհանգստութիւն պատճառեր անոնց:

Մեր Պարզ Դաւիթեան, Լուսաբաց, 13 Օգոստոս 2016

Պետական իշխանութիւնները աշխարհի ամեն կողմ սովորութիւն դարձուցած են ահաբեկիչ (terrorist) կոչել բոլոր անոնց, որոնք անյուսաւի և անհաւասար պայքար կը մղեն՝ զէնք բարձրացնելով իշխանատերի ահին ու սարսափին դէմ: Հայաստանի իշխանութիւններն ալ հետեւեցան այդ սովորութեան, երբ ահաբեկիչ կոչեցին "Սասնայ Ծռեր" խմբակի գինեալները, որոնք Խորենացի փողոցի ոստիկանատունը գրաւելով՝ ժողովրդային ապստամբութեան սերմեր փորձեցին ցանել Հայաստանի մէջ:



Թեև ապստամբություն չառաջացուց այդ խմբակին ինդոյարոյց արարքը, սակայն բաւական եղաւ որ Հայաստանի մէջ ԱՐՄԱՏԱԿԱՆ փոփոխութեան պետքը զգացներ Սերժ Սարգսեանին (ըստ իր ըրած յայտարարութեան) և Սփիւռքի մէջ ալ Սերժ Սարգսեանին հետ մեղրալուսնի մէջ գտնուող մարդիկը կամ կուսակցութիւնները, միութիւններն ու կազմակերպութիւնները շփոթութեան մատներ և ճիշդ դիրքորոշուելու կամ կողմ ճշդելու անհանգստութիւն պատճառէր անոնց:

"Ինչու՞ Սփիւռքը կը լռէ" ըսողներ և գրողներ շատ եղան հայրենիքի և սփիւռքի մէջ ու զայրոյթի ծայները անոնց վախճամ, որ վերջիվերջոյ, ինչպէս միշտ, ապարդիւն մնան:

Բարեմիտ հայորդիներ ալ եղան, որոնք ներելի չգտան զինեալ պայքար մղելու գաղափարը, ըսելով՝ թէ հայը հայու արիւն պետք չէ թափէ և թէ որևէ բարեփոփոխութիւն պետք է ըլլայ բարեշրջութեամբ կամ եղափոխութեամբ (evolution) և ոչ՝ յեղափոխութեամբ (revolution) Բարեշրջումը սակայն ինչպէ՞ս կարելի կը դառնայ երկրի մը մէջ, ուր քուէատուփերուն մէջ նախապէս որոշուած անուններ միայն կը դրուին և ուր այդ անուններու տերերուն ի նպաստ օրէնքներ կը մշակուին ու կը գործադրուին:

Մեր ժամանակէն գրեթէ քսանչորս դարեր առաջ յոյն մեծ փիլիսոփայ Պղատոնը (թ.վ. 427-347) ըսած էր. "Մի ակնկալէք արդարութիւն հոն՝ ուր ոյժն է ճիշդը" (do not expect justice where might is right) Հին օրերէն մինչև այսօր արդարութեան աղանիւն բանտարկուած կը մնայ զօրաւորի ափին կամ վանդակին մէջ: Բացառութիւն չի կրնար կազմել Հայաստանը, ուր զօրաւորը Արցախի խրամատներուն մէջ կ'ուզէ տեսնել ժողովուրդի յեղափոխական ոգին և Երեւանի մէջ կ'ուզէ սպաննել ընկերային արդարութիւն պահանջող այդ նոյն ոգին: Յուսահատութեան և յուսալքութեան շունչ կայ դժբախտաբար մեր ժողովուրդի մեծամասնութեան մօտ, որ պետք է խոստովանիլ, թէ ան կը բխի իրապաշտութենէ մը, որ նկատի կ'առնէ մեր ողբալի անցեալը (պետականութեան չգոյութիւն և ցեղասպանութիւն) և մեր աշխարհագրական դիրքն ու սահմանափակ կարելիութիւնները: Յեղափոխութիւնները կարծէք կը պատկանին անցեալին և Հայաստանի նման քաղաքական իրավիճակ ունեցող արաբական երկիրներուն մէջ ալ տեսանք, թէ ի՞նչ ակերներ ու աղէտներ գործեցին "Արաբական Գարուն" կոչուած ժողովրդային պորթկումներն ու շարժումները:

Կ'ապրինք աշխարհի մը մէջ ուր ամէն ինչ զօրաւորին գրչով կը գրուի և կը բացատրուի:

Որքա՛ն ճիշդ է խօսքը այն բանասերին, որ ըսած է, թէ "այսօր՝ երբ "ահաբեկչութիւն"ը (terrorism) այն դարբնուած կամ հնարուած անուանումն է, որ կը սահմանէ կամ կը նկարագրէ վայրագ արարքները տկար ու աղքատ կողմերուն, որուն դէմ հնարուած ու դարբնուած "պատերազմ ընդդէմ ահաբեկչութեան" (war against terrorism) որակումը կամ անուանումը կը սահմանէ կամ կը նկարագրէ վայրագ արարքները զօրաւոր ու հարուստ կողմերուն. և երբ ամենավսեմ ժողովրդավար իշխանութիւնները կը գործեն ամէն տեսակի ահաւոր ոճիրներ ընդդէմ մարդկութեան գործածելով սահմանումներ, ինչպէս՝ "ազատութիւն", "արդարութիւն" և "բախում քաղաքակրթութեանց միջև", արդարացնելու համար իրենց ոճիրները, ՄԵՆՔ. ԿՈՐՈՒՄԵԱԼԼԵՐՆ ու ՉՈՂԵՐԸ այդպիսի ահաբեկող և հակա-ահաբեկող ահաբեկչութեանց, մնացած ենք միակ արարածները ըսելու աշխարհին, թէ անմեղին դէմ կատարուած ոճիրին մէջ չկայ տարբերութիւն քաղաքակրթ սպանութեան (civilized killing) և վայրագ սպանութեան (barbaric killing) միջև, այլ կայ միայն անմեղի դէմ կատարուած ոճրային սպանութիւն (criminal killing)"

Ի՞նչ ըսել կ'ուզուի այստեղ: Կ'ուզեմ ըսել, թէ պէտք չէ հաւատք ընծայել կամ խաբուիլ ՀԱՅ թէ ՕՏԱՐ ՉՕՐԱԲՈՐԻ անոյշ խօսքերէն որ "արդարութիւն" և "ազատութիւն" կամ ալ "հայրենասիրութիւն" ու "անկախութիւն" կ'ուզէ ծախել ձեզի աթոռի հասնելու կամ կառչելու նպատակով:

Աշխարհ յոգնա՛ծ է այսքա՛ն խաբուելէն և յոգնա՛ծ է այսքա՛ն յոգնելէն:

